ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 8-Ա
20 փետրվարի 2014թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ /ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ/ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20)-րդ կետով, համաձայն Կապան քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 13-ի «Համայնքի սեփականություն համարվող գույքը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու վարձավճարների չափերը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշման, հաշվի առնելով քաղաքացի Գ. Կոստանդյանի, ռուս-հայկական հենակետային տեխնոլոգիաների կենտրոն «Էլենար» ՍՊ ընկերության կողմից ներկայացված դիմումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության ***10*** կողմ, ***0*** դեմ, ***0*** ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել համայնքի սեփականություն համարվող հետևյալ տարածքները վարձակալության իրավունքով տրամադրելու

1. Ք. Կապան, Չարենցի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող մշակույթի պալատի շենքի /վկայական թիվ 524096/ թիվ 1 մասնաշենքի տարածքից 76,9 քառ.մ ընդհանուր մակերեսով թիվ 7 և թիվ 8 սենյակները երեք տարի ժամկետով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար վարձակալության իրավունքով տրամադրել ք. Կապան, Ն. Վաչագան, տուն 10 հասցեի բնակիչ Գուրգեն Կոստանդյանին, սահմանելով ամսական 1 քառ. մետրի համար 800 /ութ հարյուր/ դրամ վարձավճար:

2. Ք. Կապան, Ռ. Մելիքյան փողոցի թիվ 8 հասցեում գտնվող Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի տարածքից 3-րդ հարկում գտնվող, 76,9 քառ. մետր

ընդհանուր մակերեսով թիվ 3 և թիվ 6 սենյակները երեք տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել ռուս-հայկական հենակետային տեխնոլոգիաների կենտրոն «Էլենար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, սահմանել ամսական 1 քառ. մետրի համար 800 /ութ հարյուր/ դրամ վարձավճար:

3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (10)՝

ՎԻԼԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ	ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԱՐԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ	ԺԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՐՍԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԿԱՐԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ
ՄՈՒՐԱԴ ՄԵԼԻՔՅԱՆ	ՎԱՀԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՄՀԵՐ ՄԻՐԶՈՅԱՆ	ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2014 թ փետրվարի 20

ք. Կապան